ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգ. և գյուղատնտ. գիտություններ XI, № 5, 1958 Биол. и сельхоз. науки

Վ. Մ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱԿԱՆԱՎՈՐ ԲԺԻՇԿԸ ԵՎ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏՆԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Այս տարի լրացավ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի բժշկական ինստիտուտի նորմալ անատոմիայի ամբիոնի անդրանիկ վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահան Մարգարի Արծրունու ծննդյան 100-ամյակը:

Վ. Մ. Արծրունին ծնվել է 1858 թվականին Նոր Բայազետում, զինվորականի ընտանիքում: Իր նախնական ուսումը նա սկսում է Երևանի պրոգիմնազիայում, սակայն հենց առաջին դասարանից տեղափոխվում է Թիֆլիսի 1-ին կլասիկ գիմնազիան, որտեղ սովորում է մինչև 8-րդ դասարանը: 1876 թվականին աշակերտական անլեգալ մի հավաքի մասնակցելու պատճառով նա վտարվում է գիմնազիայից և զրկվում որևէ այլ դպրոցում սովորելու իրավունքից: Ցարական կառավարության այդ բարբարոս վերաբերմունքը նրան ստիպում է գնալ արտասահման:

1878 թվականին Փարիզում նրան հաջողվում է ընդունվել Բժշկական ֆակուլտետ, որտեղ 7 տարի սովորելուց հետո, 1885 թվականին հաջողությամբ ավարտում է այն: Նույն թվականին Վ. Մ. Արծրունին պաշտպանում է դիսերտացիա „Oedème carpo-metacarpien d'origine rhumatismal" *թեմայով և ստանում բժշկապետի կոչում:*

1889 թվականին նրան թույլ է տրվում վերադառնալ Ռուսաստան, որտեղ (Պետերբուրգում) այդ նույն թվականին քննություն է տալիս համալսարանական վկայականի համար: Ապա, Ռազմաբժշկական ակադեմիայում ենթարկվում է քննության՝ Ռուսաստանում որպես բժիշկ աշխատելու համար: Այդ երկու քննություններն էլ գերազանց հանձնելուց հետո 1890 թվականին Վ. Մ. Արծրունին վերադառնում է Թիֆլիս՝ հիմնական աշխատանքի: 1885 թվականից մինչև 1947 թվականը (իր մահը) բժշկական ասպարեզում ծավալած նրա 62 տարվա գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի—առաջինը՝ մինչև Հայաստանում Սովետական կարգերի հաստատումը, երբ նա կատարում է բժշկի և հասարակական գործչի աշխատանք, և երկրորդը՝ Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ նա հանդես է գալիս որպես գիտնական-մանկավարժ:

Մինչև Հայաստանում Սովետական կարգերի հաստատումը Վ. Մ. Արծրունին հիմնականում աշխատում է Թիֆլիսում ոչ միայն որպես բժիշկ, այլև որպես եռանդուն հասարակական գործիչ, իր ժամանակի մեծ մասը նվիրելով մասսաների կուլտուր-լուսավորական գործին: Հենց առաջին օրվանից Վ. Մ. Արծրունին հանձն է առնում ձրի աշխատել որպես դպրոցական բժիշկ հայկական 7 ծխական դպրոցներում և սեմինարիայում, որտեղ ավանդում է նաև հիգիենայի դասեր: Նրա համառ ջանքերով դպրոցներում կատարվում են մի շարք փոփոխություններ—վատ շենքերը փոխարինվում են լավերով, դպրոցներում մտցվում են ֆիզիկական կուլտուրայի դասեր, լավանում է շենքերի լուսավորումը, օդափոխումը, նաև աշակերտների ձրի սննդի և բուժման գործը:

Դպրոցական բժշկի երկարամյա աշխատանքների ընթացքում Վ. Մ. Արծրունին տեսնում է ծխական դպրոցների հակասանիտարական վիճակն իր ամբողջ մերկությամբ և պայքար է ծավալում այն առողջացնելու համար: Այդ երկարամյա աշխատանքների իբր արդյունք 1895 թվականին նա հրապարակում է «Դպրոցական հիգիենա» ծավալուն աշխատությունը, բաղկացած 5 մասից:

Թիֆլիսում իր բժշկական երկարամյա աշխատանքի ընթացքում Վ. Մ. Արծրունին շփվելով հատկապես աղքատ խավերի հետ, տեսնում է նրանց թշվառությունը, հետամնացությունը, նրանց կյանքի հակասանիտարական պայմանները և զգում է, որ իրավունք չունի լռելյայն անցնելու նրանց կողքով կամ հանդես գալու սոսկ ականատեսի դերում, և ահա նա հասարակական պայքար է ծավալում սուր վարակիչ հիվանդությունների, թոքախտի, սիֆիլիսի, գինեմոլության, սնոտիապաշտության և այլ սոցիալական ախտերի

դեմ ոչ միայն մամուլում հրատարակված առանձին հոդվածներով, այլև բազմաթիվ հանրամատչելի բրոշյուրներով և նույնիսկ մեծածավալ աշխատություններով:

Խոսելով սիֆիլիսի, ալկոհոլիզմի և այլ ախտերի մասին, Վ. Մ. Արծրունին կանգ է առնում նրանց սոցիալական պատճառների վրա և նշում է այն բոլոր պրոֆիլակտիկ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են նրանց դեմ պայքարելու համար:

Երբ 1892 թվականին Հայաստանում բռնկվում է խոլերա, Վ. Մ. Արծրունին մի շարք բժիշկների հետ միասին գործուղվում է Երևան, որտեղ կազմակերպում է հակախոլերային պայքարի մի շարք խմբակներ: Նա ոչ միայն զբաղվում է հիվանդների բուժման հարցերով, այլև ծավալուն պրոպագանդիստական աշխատանք է կատարում մամուլի էջերում, գրում է նաև հատուկ բրոշյուր՝ «Խոլերա», որը թարգմանվում է կովկասյան բոլոր լեզուներով և արժանանում է հատուկ պարգևի:

Վ. Մ. Արծրունին վաղուց երազում էր ինքնուրույն հրատարակել բժշկական մեծածավալ մի հանդես: Մեծ ջանքերից հետո, 1902 թվականին նա, թույլտվություն ստանալով, սկսում է հրատարակել «Առողջապահիկ թերթիկ» պատկերազարդ հանդեսը, որի էջերում ծավալուն պայքար է մղում հարբեցողության, ինչպես նաև Բաքվի նավթային բանվորների շահագործման դեմ: Այդ հանդեսը ժամանակի պարբերականներից ամենամատչելին էր և ամենաբազմատիրաժը: Վ. Մ. Արծրունին այդ հանդեսի շուրջն է համախմբում մի շարք ականավոր թղթակիցներ աշխարհի զանազան մասերից — Փաշախանը՝ Եգիպտոսից, Բաբայանը՝ Փարիզից, Ղարանֆիլյանը՝ Վիեննայից, Թորգոմյանը՝ Կոստանդնուպոլսից, Բաղալյանը՝ Պետերբուրգից, Ասատրյանը ու շատ այլ բժիշկներ՝ Թիֆլիսից և Ռուսաստանի զանազան քաղաքներից:

«Առողջապահիկ թերթիկ»-ն ուներ բաժանորդներ ոչ միայն Ռուսաստանի հայաշատ քաղաքներում, այլև Արևմտյան Հայաստանում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Փարիզում ու եվրոպական այլ քաղաքներում:

Վ. Մ. Արծրունու գրած բրոշյուրները, թղթակցությունները և հատկապես «Առողջապահիկ թերթիկ»—ն իրենց բովանդակությամբ և նպատակադրումով վառ կերպով ապացուցում են նրա՝ որպես բազմակողմանի զարգացած բժշկի, հասարակական եռանդուն գործչի և անզուգական մարդու արժանիքները, որն իր ամբողջ ուժը և կարողությունը ի սպաս դրեց իր ժողովրդի կուլտուր-լուսավորական գործին:

Վ. Մ. Արծրունու ամենասիրած գործերից է եղել մայրենի լեզվով բժշկական տերմիններ հավաքելն ու կերտելը: Դեռևս 1878 թվականին Փարիզում նա մտնում է տեղում կազմակերպված հայրենակցական միության մեջ: Սա մի ուսանողական կազմակերպություն էր, որը նպատակ ուներ ուսումնասիրելու հայոց լեզուն և գրականությունը: Այդ կազմակերպության յուրաքանչյուր անդամ ուներ որոշակի պարտականություն: Վ. Մ. Արծրունին վերցնում է հայկական գիտական տերմիններ հավաքելու շնորհակալ գործը: Այդ օրվանից մինչև 1923 թվականը, շուրջ 45 տարիների ընթացքում նա հավաքում և կերտում է հայերեն բազմաթիվ բժշկական տերմիններ: Այդ գործում նրան մեծ օժանդակություն է ցույց տալիս հայագետ Լիսիցյանը: Նա օգտվում է մի շարք բառարաններից—Հայկազյան, Ն. Բյուզանդացու, Բաջունու, Լուսինյանի, Երամյանի, արևելահայ և արևմտահայ բժիշկների գիտական գործերից, Կովկասում լույս տեսած ռուս-հայերեն բառարաններից, Աճառյանի, Ամատունու, Տաղավարյանի և այլոց կազմած բառգրքերից և հատկապես հայ կլասիկ մատենագիրներից:

Առանձնապես ուսանելի է Վ. Մ. Արծրունու կյանքն ու գործունեությունը Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ պատմության մեջ առաջին անգամ Երևանում բացվում է ժողովրդական համալսարան՝ մի շարք ֆակուլտետներով: Ամենադժվարը բժշկական ֆակուլտետի կազմակերպման գործն էր, որը պահանջում էր լարված աշխատանք և նվիրված գործիչներ: Եվ ահա Վ. Մ. Արծրունին երիտասարդական կորովով լծվում է այդ աշխատանքին ու մի շարք առաջավոր պրոֆեսորների հետ միասին կազմակերպում է բժշկական ֆակուլտետ: Ֆակուլտետի կազմակերպման առաջին իսկ օրերին ամենամեծ և հրամայական պահանջը հայերեն դասագրքեր կազմելու և հատկապես բժշկական հայերեն տերմինոլոգիա ստեղծելու հարցն էր, առանց որի անհնարին էր դասավանդել: Այս հարցում Վ. Մ. Արծրունին նույնպես մեծ եռանդ և կորով է ցուցաբերում: Առաջին իսկ երկու տարիների ընթացքում մեկը մյուսի հետևից հրատարակում է անատոմիայի ձեռնարկների I, II և III պրակները հայերեն լեզվով, իսկ 1924 թվականին վերջապես լույս է տեսնում իր երազանքի առարկան՝ Ռուս-լատին-հայերեն

բժշկագիտական բառարան: Այդ բառարանն իր տեսակով հայ իրականության մեջ լինելով առաջինը, հրապարակի վրա մնում է մինչև 1940-ական թվականները: Այդ ժամանակամիջոցում Վ. Մ. Արծրունին շարունակում է աշխատել նույն թափով և վերափոխում ու հարստացնում է բառարանը նոր տերմիններով: 1943 թվականին Բժշկական ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշում ընդունեց խնդրել Վ. Մ. Արծրունուն վերանայել իր բառարանը և այն պատրաստել երկրորդ հրատարակության համար: Վ. Մ. Արծրունին լծվեց նաև այս աշխատանքին, սակայն վերահաս մահը զրկեց նրան այն ավարտելու հնարավորությունից: Բառարանը, 1955 թ. վերահրատարակվեց հատուկ խմբագրական կոլեգիայի ուժերով, որին բախտ ունեցավ մասնակցելու նաև տողերիս գրողը՝ նրա անմիջական աշակերտը:

Վ. Մ. Արծրունին հիմնեց Երևանի բժշկական ինստիտուտի անատոմիայի ամբիոնը և 25 տարի անընդհատ վարեց այն, երկրին տալով հաղարավոր բժիշկներ, որոնցից շատերը ներկայումս վարում են Բժշկական ինստիտուտի ամենապատասխանատու ամբիոնները:

Վ. Մ. Արծրունին մեծ սիրությամբ կարդում էր անատոմիայի դասախոսությունները հայերեն լեզվով և սիրում էր գործածել իր իսկ ստեղծած տերմինները: Մինչև այժմ էլ մենք, նրա անզրանիկ ուսանողներս, հիշում ենք նրա առաջին դասախոսությունը, որն այնքան վառ է մնացել մեր բոլորի հիշողության մեջ:

Մեր պարտքն է կատարությունը բարձր գնահատելով պրոֆ. Վ. Մ. Արծրունու անբասիր աշխատանքը, 1930 թվականին նրան շնորհեցին Գիտության Վաստակավոր Գործչի պատվավոր կոչում: Պրոֆ. Վ. Մ. Արծրունին 1943 թվականին պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով, իսկ 1946 թվականին՝ Աշխատանքի Արիության մեդալով: 1947 թվականին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը, ի հավերժացումն նրա անմահ հիշատակի, որոշեց Երևանի բժշկական ինստիտուտում սահմանել մի անվանական թոշակ, վերահրատարակել նրա Ռուս-լատին-հայերեն բառարանը և Երևանի բժշկական ինստիտուտի նորմալ անատոմիայի թանգարանը կոչել նրա անունով:

Եվ այսօր, նրա ծննդյան 100-ամյակի այս հիշատակելի օրերին, օգտվելով առիթից, ես՝ պրոֆ. Վ. Մ. Արծրունու աշակերտս, երախտագիտության խորը զգացմունքով հիշում եմ իմ հավերժ անմոռաց մեծ ուսուցչին:

Դոց. Հ. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ
Երևանի բժշկական ինստիտուտի նորմալ անատոմիայի ամբիոնի վարիչ: